

Պոնտական բանակն իր չուն չապահոված կապան մտաւ գիշերանց: Հազիւ թէ բանակին առաջին շարքերն սկսած էին հոն յառաջանալ՝ յանկարծ անոնց վրայ խոյսացան Հոռոմայեցիք: Պոնտական բանակն այս յեղակարծ յարձակումէն սարսափահար՝ խուճապի մատնուեցաւ ու կոտորուեցաւ անխնայ:

Հոռոմայեցիք ամէն պարագայի մէջ գրաւած ըլլալու էին ձորին երկակողմեան բարձունքները: Զորագետն, որ աշնան հունելի է, իբր բնական արգելք ունէր դեր կատարած չէր: Հնար է այս դէպքը հետեւեալ կերպով պատկերացնել մեր մտքին մէջ. Պոնտական բանակին մեծ մասն նեղ կապանին առաջակողմը կը գտնուէր արդէն, եւ հետեւող զինուորներն Ալթքէօյի կողմէ խուճապական փախուստի ենթարկուելով՝ սոյն նեղ կապանին մէջ ահաւոր խճողում ու խառնակութիւն մը կը ծագէր, եւ այսու ամէնքն առհասարակ սրահոտոր կը սպաննուին: Շատ կարելի է որ զօրասիւնին վերջին շարքերը տակաւին իջած չըլլային լեռնէն, ուր դադարած էին, եւ այս խուճապին վրայ անոնք վայրագատին ցրուած ըլլան ամէն ուղղութեամբ: Գուցէ թէ Միհրդատ եւս գտնուէր այս փախստականներուն մէջ: Այս անակնկալ դժբախտութեան վրայ դէպի կապան յառաջանալ բնական է թէ չէր հնար մտաբերել անգամ. հետեւաբար խոյս տուաւ դէպի լեռնակողմերը հիւսիսի՝ ընկերակցութեամբ իր սակաւթիւ մտերիմներու, ինչպէս նաեւ իր սիրուհւոյն Հիպսիկրատայի, որ հետագայ ձիարշաւ փախուստներուն եւս մասնակցեցաւ՝ նժոյգի մը վրայ նստած: Պոնտական բանակին վարատական այս զինուորներէն խուճք մը սակայն հետզհետէ դարձեալ համախմբուելով՝ Միհրդատ անոնց ընկերակցութեամբը մտաւ Սինորիա ամրոցը: Այս ամրոցը, իմ կարծիքովս, այժմ մեան Բաբերդ քաղաքն ըլլալու է, որովհետեւ Միհրդատ ասկէ չորս օրուան մէջ կարողացաւ Եփրատի ափունքը հասնիլ, ինչ որ Բաբերդի երկրագրական դիրքին յարմար կու գայ: Բաբերդի մէջ տակաւին այսօր կը տեսնուին վիթխարի ամրութեան մը հինաւուրց աւերակները:

Միհրդատի դիտաւորութիւնն էր ուրեմն, ինչպէս ըսինք, դարձեալ Տիգրանի քով ապաստանիլ: Սակայն մինչեւ Եփրատի ակնադիւրները յառաջանալէ յետոյ երբ իմացաւ թէ Տիգրան զին սահմանած է իր

գլխոյն, իսկոյն փոխեց իր ճամբան, եւ Թորթոմի ու Ճորթի հովիտներէն երիվաբելով՝ հասաւ Սեւ ծով, եւ անկէ ալ անդին քերեց շարունակ ծովեզերքը մինչեւ Խրիմ, ուր վերջակէտը դրաւ իր դժբախտ կեանքին:

Պոմպէոս ետ կեցաւ զինք հետապնդելէ, եւ Եփրատի ակնադիւրներու՝ որ է ըսել այժմեան Կարնոյ (Էրզրում) ճամբով մտաւ Երասիի հովիտը, եւ գետին ուղղութեամբ յառաջանալով մինչեւ Արտաշատ, զարկաւ Տիգրանի բանակը, եւ իր պայմանները պարտադրեց անոր: —

Իբր վերջարան ուսումնասիրութեանս, կ'ուզեմ հոս հարեւանցի ակնարկ մը եւս նետել Միհրդատի կարողութեան վրայ ընդհանրապէս իբր զօրավար:

Միհրդատեան պատերազմները կարելի է երեքուրոյն չըջաններու վերածել: Առաջին պատերազմին, Միհրդատ իր տրամադրութեան տակ ունեցաւ բարբարոս բանակ մը, ու պարտուեցաւ: Յետոյ կազմակերպեց իր բանակն նոր ոճով, յար եւ նման հոռոմէականին, անձամբ վարելով նոյնին հրամանատարութիւնն, եւ սակայն դարձեալ պարտուեցաւ: Այս դէպքերն ինքնին ուրեմն դեռ բաւական չեն կրնար ըլլալ անոր ենթակայական արժէքն իբր զօրավար բարձր գնահատել կարենալու: Հոսկ յետոյ ի վիճակի չեղաւ թշնամւոյն համազօր բանակ մը կազմելով Հոռոմայեցուց դիմադրել: Ասոր վրայ, պարագաներու ճնշման ներքեւ, ստիպուեցաւ դիմել ռազմական նոր եղանակի մը, զոր նա 69 թուին յանձնարարած էր արդէն Տիգրանի: Այս կերպ մղուած կռուին արդիւնքէն տեսնուեցաւ որ ռազմավարութիւնը լաւ նախատեսուած էր: Ծակատամարտ մղելէ խուսափեցաւ Միհրդատ՝ շարունակ նահանջելով, կամ անառիկ լեռներու վրայ բանակելով, եւ միաժամանակ վտանգելով թշնամւոյն պարենաւորման դիժը:

Միհրդատի յաջողութիւն չբերաւ սակայն պատերազմելու նաեւ այս նոր եղանակը, որմէ յետոյ գերագանցօրէն գիտցան օգտուիլ Պարթեւներն իրենց ապագայ պատերազմներու միջոցին: Ռայնախ անտարաւ կոչս այս պարագան միայն նկատի առնելով՝ զՄիհրդատ հնարիչը համարած է նորաձեւ այս պատերազմի, զոր նախապէս նա Հոռոմայեցուց դէմ կերարկեց: Այս տեսակէտը ճիշդ ըլլայ թերեւս Ասիոյ համար: Այս ձեւ

պատերազմ մը բնականաբար նախընտրելի կրնար ըլլար բանակի մը հրամանատարին, որ ինքզինքը տկար կը դգար, բաց դաշտի վրայ, թշնամւոյն հետ չափուելու: Նման կռիւ մըն էր որ մղած էին երբեմն նաեւ Սկիւթացիք՝ ընդդէմ Դարեհի, ու աւելի յետոյ Գերմանացիք՝ ընդդէմ Վարոսի հոռոմէական լեզէոններուն: Այս կերպ մղուած պատերազմէ մը յաջողութիւն կարելի է ակնկալել ա՛յն ատեն միայն, երբ թշնամի բանակն, որ սկզբան թուական գերակշռութիւն ունեցած էր, սկսած կ'ըլլայ հետզհետէ տկարանալ: Այսպէս պատահած է պատմութեան ամբողջ ընթացքին մէջ մինչեւ Նապոլէոնի արշաւանքը (1812):

Իրերու այս հանգամանքէն սոսկ դատելով ես երբեք համակարծիք չեմ կարող ըլլալ Ռայնախի, որ զՄիհրդատ՝ իբր զօրավար, իր իսկական արժէքէն անհամեմատ բարձր կը գնահատէ, եւ ա՛յն՝ պարզապէս որովհետեւ նա հնարիչն եղած է ռազմական այս նորաձեւ եղանակին: Ընդհակառակն ես շատ աւելի ճիշդ կը գտնեմ Մոմսէնի՝ Միհրդատի անձին, ինչպէս նաեւ անոր զինուորական ձիրքերուն նկատմամբ ունեցած հետեւեալ տեսութիւնը. «Ինք (Միհրդատ) հանձարեղ մարդ մը չէր, եւ ո՛չ ալ հազուադիւր ձիրքերով օժտուած մէկը: Ունէր մեծ կարողութիւն մը ատելու, եւ այս ատելութիւնն էր որ իրեն ոյժ ներշնչեց կէս դար ամբողջ հզօրագոյն թշնամւոյ մը դէմ կռուելու, թէեւ անյաջող՝ սակայն միշտ պատճառով:» Թերեւս այս դատաստանը չափազանց խիստ ըլլայ, եւ իր բոլոր երանգներովն իրականութեան լիովին համապատասխանէ: Փաստ է, որ Միհրդատ բնատուր շատ բարձր ձիրքերով օժտուած էր. սակայն, դժբախտաբար, հօրը մահուրէն յետոյ նշաւակ եղած ըլլալով իր խնամակարներուն՝ — գուցէ նաեւ իր մօրը — դաւաճանութեան, ստիպուեցաւ մետասանամեայ պատանին թողուլ իր հայրենական տունն ու Սինոպէ մայրաքաղաքը, եւ առանձնանալ լեռներու վրայ, ուր ապրեցաւ եօթն տարի շարունակ: Հոն պնդացուց իր մարմինը խստամբերութեամբ ու խիզախ կռիւներով, որոցմէ չափազանց կ'ախորժէր: Պատեհ առիթը պակսեցաւ անոր՝ իր մոլի կիրքերը չափաւորելու: Չունեցաւ երբեք իրապէս ռազմագէտ դաստիարակուսուցիչ մը, որ անոր զինուորական բնատուր այս ձիրքերը զարգացնելով՝ կատա-

րեալ զօրավար մը ստեղծէր անկէ: Իր ռազմավարութեանն եւս վերապահուած էր այն դաժան ճակատագիրը, որով պարուրուած էր իր ամբողջ կեանքն ընդհանրապէս: Հելլենականութեան մը շարքին ներքեւ անգամ նա մնաց միշտ միեւնոյն բարբարիկ բռնապետը: Ինքն չէր յամենայն դէպս ա՛յն անձը, որ պիտի կարենար Ալեքսանդր Մեծի սկսած ձեռնարկն — Ասիականութեան եւ Հելլենականութեան ձուլումն — իրագործել. նպատակ մը, զոր անոր կ'ուզէ վերագրել Ռայնախ, եւ զոր գուցէ, հնար է թէ երազած ըլլար նա: Մէկ խօսքով, «Միհրդատ, իր կեանքի տեւողութեանը», — Շլիֆէնի բառերը գործածելով, — «ամենի ճլաղուխը միայն նուաճեց, սակայն Արիստոտելի մը սուքերուն առջեւ չնստաւ երբեք»:

(Վերջ:) Հ. Գ. ԳԱՐԱՍՓՆԵԱՆ



**Ծ Ա Ն Օ Թ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ն Ք**  
**Ս Տ Ա Մ Գ Օ Լ Ո Յ Պ Ա Տ Մ Ո Ւ Թ Ե Ա Ն**  
**Ե Ր Ե Մ Ի Ա Չ Է Լ Գ Ի Ի Ք Ե Օ Մ Ի Ի Մ Ե Ա Ն**

Գ Լ Ո Ւ Խ Զ.  
 (Շարունակութիւն):

ՏՈՂ 211: «Սան Ծործի է քիլիսան այն»: Գաղղիացուց Ս. Գեորգ եկեղեցին է այս, որ այժմս իսկ կը կենայ Ղալաթիոյ Բէնշէշէմուլէ բազարի կողուած վայրին բարձունքին վրայ: Վենետիկի Միթիթարեան Միաբանութիւնը 1806 ին այս եկեղեցին մէջ կը փոխադրէ իւր «Մանկանց Դպրատունը», զոր 1803 ին բացած էր Ղալաթիոյ ուրիշ մէկ կողմը, այսինքն Յիսուսեանց եկեղեցին:

Այս վարժարանի մասին Վենետիկի Միթիթարեանց Աթոռակալ Հ. Յովհաննէս Ծ. Ա. Թորոսեան վանքի Գիւանատունէն քաղելով կը գրէր ինձ 1928 յունվարին, հետեւեալ կարեւոր տեղեկութիւնը:

«1803 նոյեմ. 10 Ամիրայք՝ Միթիթար ծաղիկեան, Ստեփան Ասկերեան, Աթանաս Մազլըմեան կը գրեն. վիշտս

ի ներքուստ, վիշտս յարտաքուստ կրելով, յառաջ տարինք մեր Լուսաւորչի եղբայրութիւնը, քանալով ի մեծ պարտեզին ճեղքի մի մասնուն ի յառաջացումս մանկանց Հայոց Ազգին: Վարչութիւնը կը յանձնուի առ Հ. Պողոս Թընկրտեան<sup>1</sup>, որ կը հաղորդէ յամին 1806, թէ մանկանց Դպրատունը փոխադրուած էր ի Ս. Գէորգ եւ թէ աշակերտաց թիւն էր 60: 1810ին Ս. Գէորգի դպրոցը երկուքի կը բաժնուի, Հ. Պողոս մէկ մասին հետ կը փոխադրուի ի Բերա, ուր իր ձեռքին տակ կը կրթուին 80 մանկունք աղքատորդիք ընդ այլոց:

1809—1810, Մխիթարեանք երկու դպրոց կ'ունենան, մին ի Լալաթիա եւ միւսը ի Բերա: Միոյն վարժապետ կ'ըլլայ Հ. Սուքիաս Սոմալեան եւ միոյն Հ. Մինաս Բժշկեան:

Գովելի են յոյժ Մխիթարեանք, որ այդչափ կանուխ ձեռնարկած են Կ. Պոլսոյ մէջ Հայ կրթական գործին, եւ մինչեւ այսօր ալ կը շարունակեն զայն անվճատ, հակառակ իրենց դէմ երբեմնակի ցցուաց խոչընդոտներու:

Տող 217: «Եղբայր նանիր Անդօնին՝ Ուրացող Հասան աղան այն:» Կարելի չեղաւ ինձ որոշել, թէ ո՞վ է այս տողին մէջ նշանակուած Անդօն անուն անձը, զոր Երեմիա 2էլէպի նանիր (փուճ) մակդիրով կ'որակէ, եւ իրաւամբ, գոնցէ անոր համար որ ինչպէս երկրորդ պարբերութիւնը կը յայտնէ, եղբայր մ'ունեցած է Ուրացող, այսինքն՝ տաճկցած եւ «Հասան Աղա», կոչուած:

Այս տաճկցած Հայն է՝ որ 216րդ տողին ցոյց տուած վայրը աղբիւր մը եւ դպրոց մը կը շինէ՝ հարկաւ այլազգիներու համար:

Հետագայ 241րդ տողին մէջ ալ կը յիշուի Անդօն մը «կեալուր», տիտղոսով. միեւնոյն անձն է այս, որու մասին յետոյ:

Տող 226:

«Այլ ոչ կարեմք գալ աստէն՝ Երբ Գուլէ գալին մեր սահման:»

<sup>1</sup> Այս դպրոցը ունեցած է վարժապետ մը Անտոն Բեօլեան անունով որ 1803—1817 հանգիպած դէպքերու յիշատակութիւնը գրած է եղբր (տե՛ս Հանդէս Ամսօրեայ 1911, էջ 489):

Տող 227:

«Դէպ է մեզ ընդ ոահիւս ուղղիլ՝ Մինչ ի Պէկողլի ընթացման:»

Տող 229:

«Արտաքս ի վեր քաղաքիս՝ Դէպ հիւսիս արդ մեք գլնաման:»

Տող 231:

«Քանզի վերա ճամփու ենք՝ ի տեօրթ եօլ աղզին եմք հասման:»

Տող 232:

Մինն յետ կողմս եւ մինս ընդդէմ՝ ճանապարհս որ երկարանան:»

Գիտմամբ կ'ընդօրինակեմ այս հինգ տողերը, որպէս զի Երեմիաի ուղեգրութիւնը գիտնանք: 227 տողին յիշած «Պէկողլի» ն արդի Պերան է, ուր կ'առաջնորդէ Երեմիա իւր Հիւրը, զայն նախ Գուլէ-գալիի (տող 212 եւ 226) հանել է յետոյ:

Պերաի մեծ պողոտային հին՝ որ եւ այժմեայ Տեօրթ եօլ աղզի կոչուած (տող 231) քառուղիէն կը սկսի եւ դէպի հիւսիս վեր ընթանալով (տող 229) ցոյց կու տայ ինչ որ նշանաւոր եւ նկատելի կը գտնայ այս ճամբուն վրայ, շէնքեր, դեսպանատուն, օտար եկեղեցիներ, վանքեր, եւ այլ դեսպաններ:

Սակայն Երեմիա 2էլէպի իւր այս նկարագրութեան պահուն, Հայկական ոչինչ չի յիշատակեր, որովհետեւ այդ ատենները արդէն Հայ անուն կրող բան մը գոյութիւն չունէր Պերաի մէջ, ո՞չ եկեղեցի, ո՞չ դպրոց. թէեւ կ'աւանդուի թէ Գրեմալուլայի կողմը Ս. Աստուածածին<sup>1</sup> անունով մատուռ մը կայ եղեր, բայց այդ աւանդութիւնը բոլորովին զուրկ է վաւերականութենէ:

Ամենասակաւ թիւ Հայ բնակչութիւն մը միայն կար հոն, կար նաեւ Բանկալթիի հնադարեան վաղեմի Ազգային Գերեզմանատունը, զոր Երեմիա կը յիշէ (տող 282) իբրեւ Ղալաթիոյ հայ բնակիչներուն յատուկ (տող 286), որուն վրայ պիտի խօսինք իւր կարգին:

\* \* \*

<sup>1</sup> Բե-գալի-ն, թիւ 3259, 9/22 յունիս 1907:

Յայտնի է՝ որ ներկայիս Պերա լի է Ազգային բազմաթիւ հաստատութիւններով եւ Յիշատակներով, որոնց վրայ կ'արժէ կանգ առնել պահ մը, եւ Երեմիա 2էլէպիի հետեւած ուղեգիծը մեզ առաջնորդ առնելով՝ դիտել ու նշանակել կարգաւ ինչ որ Հայկական կը գտնանք Պերաի Տեօրթ-էօլ-Աղզիէն մինչեւ Թաքսիմ:

Պերաի Ազգ. Հաստատութիւններու մեծագոյն մասը մեծ պողոտային ձախ կամ Արեւմտեան դին ցանուած են, քանի մը հատն ալ՝ աջ կամ Արեւելեան կողմը:

Առաջինները նախ դիտելով՝ կը գտնենք, 1. Պողոտային ձախ եզրը նեղ անցքի մը մէջ, Հայ կաթողիկէներու Ս. Երրորդութիւն եկեղեցին, որ նախնապէս պատկանած է լատիններու, բայց 1857 մայիս 18ին Հասունեան Անտոն Գերապայճառի միջոցաւ գնուած է այն, եւ նոյն տարին իսկ Հայկական արարողութիւնները սկսած են հոն կատարուիլ եւ կը կատարուին ցայսօր:

Շէնքը Հայ կաթողիկէ հասարակութեան սեպհականութիւն ըլլալով հանդերձ, Աստրիական Տէրութեան հող միշտ նկատուած է, որով կը վայելէր շարունակ այս Տէրութեան պաշտպանութիւնը. այս պատճառով՝ 1895ի եւ 1896ի արիւնահեղ տխուր պատահարներու միջոցին տարբեր տարբեր դաւանանքի պատկանող Հայեր՝ թուով 400 է աւելի, կրցան 15 օրի չափ ապահով ապրիլ այս եկեղեցիին մէջ, ամէն կերպ հոգածութիւն եւ խնամք անթերի վայելելով, թաղական խորհուրդէն եւ ժողովրդապետ Գազըիկեան Գերապայճառէն:

Այս եկեղեցին ունեցած է նշանաւոր բարերարներ, որոնց մէջ նկատելի են՝ Ալաշվէրտի, Թնկըրեան, Մըսըրը, Կէօչեան եւ այլն ընտանիքները: Այս եկեղեցիին ճիշդ ետեւները թէփէ պաշի կոչուած տեղն էր, որ Վիեննայի Մխիթարեան Միաբանութիւնը 1825ին բացաւ իր դպրոցը, որ այժմ կը գտնուի Բանկալթի, եւ որուն վրայ պիտի խօսինք ապա:

\* \* \*

2. Գէպ առաջ ընթանալով եւ հասնելով Կալաթա-սէրայը կոչուած վայրը, հոս ձախ թեւի վրայ Պալըք բազար փողոցին մէջ՝ Հայոց Ս. Երրորդութիւն փառաշէն եկեղեցին:

Եկեղեցիին քահանայատէրին մէջ գրտնուած արձանագրութիւնէ մը կ'ուսանինք, թէ անոր հողը Յոյներէ գնուած է դէպի 1797ին եւ տասը տարիի չափ այդ տեղը փոխաթով

ծածկուած յարկի մը ներքեւ ժամերգութիւն կատարուելէ յետոյ, նախ դպրոց մը կը շինուի հոն եւ 1807ին ալ տեղի կ'ունենայ եկեղեցիին առաջին հիմնարկութիւնը, Բաբերգի Յովհաննէս պատրիարքին օրով եւ նախաձեռնութեամբ Չիրիշեանց կամ Չերազեանց Գրիգոր Ամիրայ Մ. Գէորգեանի<sup>1</sup>. օծումը կատարուած է նոյն տարւոյն յունիս 9ին ձեռամբ Թրակիոյ նուիրակ եւ Էջմիածնէն եկած Ալիքսան եպիսկոպոսի:

Այս հիմնարկութեան Պատմութիւնը կը պահուի Ղալաթիոյ Ս. Լուսաւորչի եկեղեցին, եւ է հետեւեալը<sup>2</sup>,

«Ամենասուրբ Երրորդութիւն եկեղեցւոյս Պերայու սեփականեալ սրբազան մատուցք, խաչք, սկիհք, աղանիք, սրբատուփք, գաւազանք, կանթեղք, աշտանակք եւ այլ ամենայն ոսկեղէն եւ արծաթեղէնք, մատէնեայ եւ պղնձի եկեղեցական անօթ, զորոց մի ըստ միոջէ համարով եւ կշռով գումարն պարունակեալ ի սմա յայտնի յիշատակեցան:

Ի ժամանակի Տեառն Յօհաննու քաջաքարոզ կարդացեալ Աստուածաբան պատրիարքին մեծի Պոլսոյս:

Եւ ի միւթէվէլլիութեան մեծավաստակ սկզբնաշինողի սուրբ եկեղեցւոյս գերյարգելի Գրիգոր Ամիրայի Մահտեսի Գէորգեան, որ յամենայն անձէ գուն զործեալ մահու չափ ճգնեցաւ Տեառն գործակցութեամբ ի լոյս ընծայել զեռալոյս Բարոյն զգերահոգակ տաճարս քրտնաշխատ գտեալ անձնաղիր ջանիս. զամենայն վտանգ ի բաց արհամարհեաց ի սէր հանրից Խնամակալին Ամենասուրբ Երրորդութեան, յորոյ անուն կառուցաւ սուրբ եկեղեցիս: Յամի Տեառն 1907 եւ ՌՄԾԳ, եւ ի մայիսի 31 որ օր էր իննորորդ Համբարձման Տեառն, յաւուր ուրբաթու, օծեալ յՈրոմէլի նուիրակէ ի Տեառն Ալիքսանայ արհիեպիսկոպոսէ Սրբոյ Էջմիածնի:»

Այս գրութեան անմիջապէս կը յաջորդէ ութ տող ոտանաւոր մը, որուն սկզբնական տառերը կը յօրինեն «Ի Գրիգորէ» բառը,

<sup>1</sup> Արեւել, թիւ 6398 եւ 6399, 25 եւ 26 յունուար 1907, թիւ 6407, 5 փետրուար 1907: Թիւ 6513, 11/24 յունիս 1907: Բե-գալի-ն, թիւ 3252, 9/22 յունիս 1907:

<sup>2</sup> Անք:

այսինքն՝ եկեղեցւոյն շինութեանը նախաձեռնարկ եղող ամիրային անունը, ահաւասիկ այն,

“Ի սկզբանէ էդ՝ երեքսրբեան լոյս, Գոհութիւն զքէն՝ Աստուած մեր եւ յոյս, Ռէնամբարձ օրէ՛ յինեակ թուոյ կոյս, Ի սմա հեղաւ՝ Միւռոն սրբալոյս. Դանձ Արամանըս՝ մսայր եւ ի խոյս, Որ յօժմանէ յետ՝ ինն աւուր յայս կոյս, Ռէն աստ զննանի՝ Սուրբ Գառն Յիսուս, Էր քանն կալար՝ ԶԱԶՈՅ թիւն կոյս:”

Բռնագատուած սոյն յանգերու եւ տառերու ընդմէջէն դժուար չէ գուշակել, թէ եկեղեցին օծուած է 2 + Ա + 2 + Ո + Յ (6 + 1 + 900 + 600 + 300 = 1807) թուին՝ Համբարձման Տօնէն ինը օր վերջը, եւ ասկէ ինը օր յետոյ ալ հոն մատուցուած է առաջին Ս. Պատարագը:

Այս շինութիւնը պատմող երկրորդ Յիշատակարան մ'ալ կը գտնուի Ս. Երրորդութեան եկեղեցին, գրուած 1843ին Աւագերէց Տ. Գրիգոր Բաշանայ Աճէմեանէ: Վերոյգրեալին յար եւ նման է այն, գուցէ անկէ ալ ընդօրինակուած, սա տարբերութեամբ միայն, որ եկեղեցին շինող Գրիգոր Ամիրայ Մ. Գէորգեանը՝ հոս կը մականուի նաեւ Զէրազըրեան<sup>1</sup>:

Գրիգոր Ամիրայի եղբօր թոռներն են՝ Գասպար Զէրազ եւ Մինաս Զէրազ: Այս Գրիգոր Ամիրային եղբայրն էր երեւելի հատավաճառ Գասպար ամիրայ Զարազեան, զոր վատ զրպարտութեան մը աղագաւ, Պոլսոյ Վալիտէ խանին դռնէն անգթաբար կախած են՝ 1821 ապրիլ 29ին<sup>2</sup>:

Ս. Երրորդութիւն եկեղեցին, որ Հայ ժողովրդին հեազհետէ Ղալաթիաէն Պերա տարածուելուն պատճառաւ շինուած է, ի հնումն կը կառավարուէր Ս. Լուսաւորչի հետ. իւր անունը առած է Պերաի Լատին Ս. Երրորդութիւն եկեղեցիէն, ինչպէս առած էին արդէն Յոյները, եւ առին յետոյ Հայ կաթողիկոսները եւ վերջի վերջոյ ալ Հայ բողոքականները:

Հազիւ երեք տարուան կառուցուած էր, փայտաշէն ըլլալուն կ'այրի 1810ին: Բայց կը վերաշինուի շուտով<sup>3</sup>, դարձեալ փայտաշէն. քա-

<sup>1</sup> Արեւել, Կ. Պոլսոյ, թիւ 6407, 5/18 փետրուար 1907: <sup>2</sup> Պարմ. Հայոց, Աւետիս Պերպերեան, էջ 175 եւ 465: <sup>3</sup> Արեւել, 6399, 8 փետրուար 1907: Բիւզանդիոն, թիւ 3252, 22 յունիս 1907:

նորդ դար մը եւ աւելի կը տեւէ այսպէս, յետ 1836 յունիս 7ին վար կ'առնուի եւ շուրջ ուրիշ տեղեր ալ ծախու առնուելով, կը կառուցուի՝ արդի հոյակապ եկեղեցին, գեղեցիկաշէն եւ ընդարձակ, որուն ճարտարապետն էր՝ Պալեան Կարապետ եւ համամճի պաշի Մինաս եւ ջանադիրները՝ Աւագ երէց Տէր Զաքարիա ու Պաղտասար ամիրայ Զարազեան<sup>3</sup>:

Եկեղեցիին օծումը տեղի ունեցած է 1836 յունիս 18ին<sup>4</sup> որուն լուռ յիշատակութիւնն այն պարզ Արձանագրութիւնը, զոր եկեղեցւոյ ճակատը կը կարդանք սապէս,

“Սս եմ՝ Դուռն կենաց, ի պատրիարքութեան Տեառն Ստեփաննոսի Արքեպիսկոպոսի Հայոց ՌՄԶԷ:”

1907 յունիս 10ի Հոգեգալստեան տօնի օրը այս եկեղեցւոյ շինութեան Հարիւրամեակ մեծահանգէս տօնեց Մաղաբիա պատրիարք Օրմանեան եւ այս առթիւ տաճարին ճակատը զետեղել տուաւ 14 տողէ բաղկացած Յիշատակարան-Արձանագիր մը, որ է՝

ՅԻՆՆ ՅՈՒՆԻՍԻ 1807 ԱՄԻ

Կատարեցաւ աստէն հանգէս նաւակատեաց

ԱՌԱՋԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ԲԵՐԱՅԻ

Ի ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ՅՈՒՎԱՆՆՈՒ ԲԱԲԵՐԴԱՅԻՈՅ

Ի ՏԱՄՆ ՅՈՒՆԻՍԻ 1907 ԱՄԻ ԿԱՏԱՐԻ ՀԱՆՎԵՍ ԴԵՍ ԴԱՐԱԴԱՐՁԻ

Ի ՎԵՐԱՇԻՆԵԱԼ ՏԱՃԱՐԻՍ ՍՐԲՈՅ ԵՐՐՈՐԴ ԴՈՒԹԵԱՆ Ի ՊԱՏՐԻԱՐԿՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ՄԱՂԱՔԻԱՅ ԲԵՐԱՅԻ ՈՅ

ԹԱՂՆ ԲԵՐԱՅԻ

Երբեմն փոքրիկ հատուած հայաբնակութեան,

բարգաւաճեալ յամս հարիւր,

լինել յառաջագէմ ի թաղօրայս մայրաքաղաքին՝

ՏՕՆԵ ԵՒ ՅՆԾԱՅ

<sup>1</sup> Անդ եւ Անդ: <sup>2</sup> Մանգումբ, թիւ 1840, 29 յունիս 1907: <sup>3</sup> Արեւել, 8 փետրուար 1907: <sup>4</sup> Բիւզանդիոն, թիւ 3252, 22 յունիս 1907: Երրորդ. Հայոց, Ա. Պերպերեան, էջ 494:

Այս Հարիւրամեակի առթիւ եկեղեցիին դէմը գտնուած սրահին մէջ գրական հանգէս մ'ալ տեղի ունեցաւ նոյն օրը, եւ եկեղեցիին ու Պերա թաղին հարիւր տարուան Հայ կեանքի պատմութիւնն ըրին՝ Հրանտ Ասատուր, Դկտ. Ա. Թորգոմեան եւ Արշակ Ալպոյաճեան, որոնց ճանաչող հրատարակեցին այն ատեն Բիւզանդիոն եւ Արեւելք թերթերը:

Ս. Երրորդութեան եկեղեցին իր աւագ դրան աջակողմը ունի Ս. Վարդանի նուիրուած սիրուն մատուռ մը, որ 1846—1880 յատկացուած էր Ասորիներու, իրենց եկեղեցական արարողութիւնները հոն կատարելու: Այժմ այդ մատուռը պահարան է Հայերէն Զեռագիրներու:

\* \* \*

Եկեղեցիին հետ, դէմը կառուցուած էր նաեւ 1838ին, թաղ. խորհրդարանը եւ 1846ին ալ թաղին Երկսեռ Նարեկեան վարժարանը, որ 1870ի Պերաի մեծ հրդրհին այրեցաւ, բայց տարիներ վերջը աւելի փառաւոր շինուեցաւ քարուկիր եւ եռայարկ:

— Այդ շէնքին մէջ են դարձեալ այժմ թաղական եւ քահանայական խորհրդարանները. հոն էր Նարեկեան դպրոցը, որ յետոյ փոխադրուեցաւ Ս. Յարութիւն, եւ անոր տեղը գրաւած է այժմ Արհեստանոցը, եւ Ազգ. Մատենադարանը, որ 1911ին վեր բերուեցաւ Ղալաթիաէն: Հոն 1921 դեկտեմբերէն ի վեր զետեղուեցաւ նաեւ նորակազմ Հայ Արուեստի տունը որ տեւականութիւն չունեցաւ:

— Սոյն խորհրդարաններու վըայի յարկին մէջ 1919ին բացուեցաւ Ազգ. Տեղեկատու Դիւանը, ուր Հայ դատի վերաբերեալ բոլոր հրատարակութիւնները գեղեցիկ դասաւորութեամբ հաւաքուած էին: Ունէր նաեւ իր յատուկ Մատենադարանը որ կը պարունակէր Հայ եւ օտար 8000ի մօտ հատոր: Բայց այժմ գոյութիւն չունի այդ:

— Եկեղեցիին արեւելեան հիւսիսային կողմը կայ մասնաւոր շէնք մը, ուր հաստատուած է Պերաի Աղքատախնամի, Գարմանատունը. հոս 1897էն ի վեր անդադրում կը դարմանուին աղքատ հիւանդներ, երբեմն ալ կազմակերպուեցան Հիւանդապահութեան դասախօսութիւններ: Այս շէնքին մէջ փոխադրուեցաւ քիչ մը ատեն Հայաստանի Հանրապետութեան հիւ-

պատասարանը եւ անցագրատունը: Պերաի աղքատախնամը՝ կէս դարէն աւելի գոյութիւն ունի, եւ անոր յրեւեանը կատարուեցաւ 1927ին<sup>1</sup>:

Հարաւային փակին մէջ թաղուած է Իգնատիոս պատրիարքը, որ հազիւ թէ 1869 յունիս 31ին ընտրուած, ծանրապէս կը հիւանդանայ եւ տասներկու օրի չափ անկողին մնալէ յետոյ կը վախճանի՝ 12 օգոստոս 1869ին 42 տարեկան Հասակին:

Հայ եկեղեցական դատուն կարեւոր դէմքերէն էր այն, առաջնորդական գնահատելի պաշտօններ կատարած էր, եւ պիտի կարենար լաւ պատրիարքութիւն մը ընել, եթէ մահը վըայ չհասներ:

Ունի փառաւոր ու գեղեցիկ շերիմ մը, որուն ճակատին վըայ կը կարդացուի 11 տող Արձանագրութիւն մը սապէս՝

Աստ հանգչի Տէր Իգնատիոս Բարմաճեան Արքեպիսկոպոս ընտրեալ ի պատրիարքութիւն Կոստանդնուպոլսոյ

ի 31 յուլիսի 1869 ամի Փրկչին Եւ կնքեալ զկեանս յետ երկոտասան աւուրց,

Որում ի յիշատակ զՄահարձանս զայս նուիրէ Ազգս Հայոց ցաւագին

Ծնեալ ի Կ. Պոլիս ի 1827 վախճանեալ ի 1869 օգոստոս 12 եւ թուին Հայոց ՌԾԾԸ

Իգնատիոս պատրիարքին անմիջապէս յաջորդ ընտրուած է մեծանուն Խրիմեան Հայրիկը, որուն պատրիարքութիւնը տեւած է 4 սեպտ. 1869—3 օգոստոս 1873:

3 օգոստ. 1873ին էր որ Խրիմեան հրաժեշտ տուաւ իր պաշտօնին, այդ օրուան Ազգային ժողովին մէջ անձամբ կարդալով այն նշանաւոր

<sup>1</sup> Այդ Յորեմեանի առթիւ տարակ մ'ալ հրատարակեց Աղքատախնամը 1927ին:

Հրաժարագիրը, որ ազգային Տարեգրութիւններու կարեւոր մէկ էջը կը յօրինէ<sup>1</sup>:

Ս. Երրորդութիւն եկեղեցիին 1836ի շնորհիւ գործածուած են Բանկայթիի Ազգ. Գերեզմանատունէն բաղմամբիւ քարեր, որոնց պատմական արժէք ունեցող Հնամենի Արձանագրութիւններն ալ դժբախտաբար անհետ ջնջուած են: Եկեղեցիին ընդարձակ փակը ամբողջ սալարկուած է շիրմաքարերով. ասոնց շատերուն վրայ դեռ կը կարդացուին Տապանագիրեր կիսով եւ աւելի եղծուած, որոնցմէ հատ մը միայն եւ ամենահինը կը մնայ տակաւին ընթեռնելի, իր 1666 թուականով, կը գրեմ հոս այդ Տապանագիրը մտաւորաւ կորուստէ մը զայն փրկած ըլլալու փափաքով:

Երկաթագիր խոշոր տառերով փորագրուած է այն, եօթը տող, եւ է՝

ԱՅՍ ՏԱՊԱՆ ՀԱՆԳՍՏ  
ԵԱՆ ԽԱՍԿԱԼՅԻ ՍԱՐԳ  
ԻՍԻ ՈՐԴԻ ԶԱՔԱՐԻՆ ԿԵՆ  
ԱԿՑՈՒՆ ՄԱՆԴԻՇԻՆ ՈՐ  
ՀԱՆԳԻՊԻ ԱՍՏՈՒԱԾ ՈՂՈՐ  
ՄԻ ՈՐ ՓՈՒԵՑԱՒ Ի ԿԵԱՆՍ Թ (Գ)  
ՌՃԺԵ (1115 + 551 = 1666)

Պերաի Ս. Երրորդութիւնը, թէեւ Ղալաթիոյ, Գուլիստանի Սամաթիոյ եւ Պալաթի եկեղեցիներուն չափ պատմական յիշատակներով լին անցեալ մը չունի, բայց դարձեալ նշանաւոր եղած է կարեւոր դէպքերով:

Ս. Երրորդութիւն եկեղեցին ունեցած է նշանաւոր քահանայներ եւ Աւագերեցներ, որոնց նկատելիներն են Տէր Զաքարիա, որ եկեղեցւոյ երկրորդ շինութեան նախաձեռնարկը եղած էր. Տէր Գրիգոր Աճեմեան, Տէր Յովհաննէս Մկրտեան եւ ուրիշներ. ունեցած է Պերճախօս քարոզիչներ, որոնց յիշատակելիներն են՝ Խորէն Նար-Պէյ, Գարեգին Արուանձտեանց, Մաղաքիա Օրմանեան, Ներսէս Ասլանեան, Հմայեակ Գլմաքսեան եպիսկոպոսները. ինչպէս նաեւ Երուսաղէմի արդի պատրիարքը Եղիշէ Արք. Գուրեան եւ Մեսրոպ եպ. Նարոյեան, որ 1927 յունիսին Կ. Պոլսոյ պատրիարք հռչակուեցաւ:

<sup>1</sup> Արեւիկայի Եկեղեցի, 1873, էջ 888-889:

Տեսանք վերեւ, որ այս եկեղեցիին կը շատ կանուխէն բացուած է մանուկներու դպրոց մը. կը կոչուէր այն Ս. Էջմիածին<sup>1</sup> որուն շնորհիւ եկեղեցիին 1807 ի շինութեան բարձրագոյն արտօնութիւնը կրցած են ձեռք բերել. ինչպէս կ'ըսեն անոնք եկեղեցին պահուած ձեռագիր քահանայատեւորը, զոր յիշեցի արդէն, բայց 1836 վերաշինութենէն վերջը՝ Միսաք ամիրայ Միսաքեան շինած է հոն Նարեկեան վարժարանը, որ մինչեւ 1870 ի հրդեհիւ փայլուն շրջան բոլորած է:

Նարեկեան վարժարանը եկեղեցիին արուած կալուածներուն հետ վերաշինուած 1882 ի ատենները, բայց յետոյ փոխադրուած է Թաքսիմի Ս. Յարութիւնը:

Վարժարանին շէնքը 1887 մայիսին եղբայրներու Արհեստանոց, որ քանի մը տարի փայլուն ու բեղուն դիրք մը ունենալէ յետոյ գոցուեցաւ, միջոց մը Նարեկեան Մանկավարժանոց եղաւ Տիկին Մատակեանի հոգածութեամբ, բայց այս մանկավարժութիւն մասին յետոյ պահ մը դադարեցաւ ու յետոյ սկսաւ շարունակուիլ:

1920 ին դարձեալ աղջիկներու յատուկ Արհեստանոցի փոխուեցաւ այն եւ շնորհիւ Հ. Տիկինաց ընկերակցութեան, խիստ պատուաբեր վիճակի մը մէջ, հոն կարուծեւ ու փափուսասեղնագործութիւն սկսան ուսուցանել Հ. որբուհիներու եւ տարագրութեան զոհ եղաւ հայ աղջիկներու որոնց մասներու արտադրագործերը օտարին խկ հիացումը շարժեցին:

\* \* \*

Ըսի արդէն թէ Ազգ. Մատենադարան ալ 1918 էն ի վեր եկեղեցիին դէմը գտնուած շէնքը փոխադրուած է. եւ հոն էր որ 1918 թ. յետոյ կը գումարուէին Հայ կարմիր խաչի, Հ. Տիկինաց ընկերակցութեան, Հայ Արուեստի տան եւ ուրիշ ազգօգուտ ընկերութիւններու եւ Միութիւններու բոլոր ժողովները:

Ազգ. վարչութեան ժողովները ալ մինչեւ վերջն ժամանակներս հոն կը գումարուէին: Հ. էր որ 1913 ին Հայ բժշկական Միութիւնը Հիւանդապահութեան համար սարքած առաջին դասախօսութիւններն ըրաւ մեծ յաջողութեամբ (Շարունակելի): ԴԿՏ. ՎԱՀՐԱՄ Ե. ԹՈՐՈՒՄԵԱՆ

<sup>1</sup> Հանդիս Արեւիկայ, 1905, էջ 76 եւ Նոյեան Ազգային Կ. Պոլսոյ 1852, թիւ 9, ապրիլ 23:

ՊՐՈՓ. ՀՈԼԳԵՐ ՊԵՊԵՐՍԸՆ

ՀԱՅԵՐԵՆԻ ԳԻՐԲԸ

Յաջորդ գրուածը քարգմանութիւն մըն է նշանաւոր հայագետ ու լեզուաբան գիտնականին՝ Պրոփ. Հոլգեր Պեպերսընի այն գեղեցիկ ու հետաքրքրական յօդուածին, որ լոյս տեսած է Մ. Էքերտի Հանրագիտակիմ մէջ «Հայագ» անուան ներքեւ Բ. լեզու: Երբ մեմֆ այսօր ձեռնարկած եմֆ այդ քէե համառօտ՝ սակայն ամենայն հստակեամբ գրուած նշանաւոր գրութիւնն հայերէն քարգմանութեամբ ՀԱ. ի ընթերցողներուն ծանօթացնել, բնականաբար յարմար չէր այդ ընդհանուր վերնագիրը պահել, պատշաճ համարեցանք հետեւեալ տիտղոսը տալ գրութեան՝ Հայերէնի Գիրքը. գլխաւորաբար անոր համար, որովհետեւ Հեղինակն այդ յօդուածին մէջ աւելի հայերէնի դիրքն է, որ կ'որոշէ խաղաղեղով մէկ կողմանէ հայերէնի փոխառութեան յարաբերութիւնները, միւս կողմանէ անոր ազգակցութեան կապերը միւս հնդեւրոպական լեզուներու հետ:

Ա. Փոխառութեան աղբյուրներն ու առնչութիւնները:

Փոխառեալ բառերը, որոնցմով հայերէն լեզուն այնչափ հարուստ է, ժողովրդեան նախապատմութեան<sup>2</sup> մասին մեզի շատ նուազ ծանօթութիւն կը մատակարարեն քան ինչ որ մարդ կ'ակնկալէ յառաջագունէ: Բնականաբար բնաւ նկատի չեն առնուիր այն փոխառութիւնները, որոնք հայ գրաւոր աւանդութեան սկիզբներն եղած են դանաղան աղբյուրներէ: Այս փոխառութեանց հնագոյնները (նաեւ թէեւ համառօտ՝ Հայ ազգին մահմեդական իշխողներէն՝ նոր-պարսկերէնէ եւ արաբերէնէ ստնուած բառերը, որոնց վրայ աւելցնելու է յետոյ թրքական բառերուն հեղեղն եւ միւս կողմանէ թէեւ թուրք նուազ, բայց հետաքրքրական փոխառութիւններ դաղիբերէնէ խաչակիրներու ժամանակ) ամփոփուած են Հիւրըմանի Գերականութեան մէջ, որ աստ

<sup>1</sup> Reallexikon der Vorgeschichte, herausgegeben von Max Ebert, Berlin 1924, Armenier անուան ներքեւ, էջ 219:

<sup>2</sup> Հոս եւ յաջորդ մասերուն մէջ կը շեշտուին նախապատմութիւն, նախապատմական բառերը, Յօդուածին «Նախապատմութեան Հանրագիտակիմ» համար գրուած ըլլալուն պատճառաւ է: Թ. Մ.

Եւ այժմ ստուգարանական բառագրքի մը տեղը կը բռնէ: Սակայն նաեւ այն հնագոյն փոխառեալ բառերը, որոնք մեր առջեւ կ'եւրեն հայերէն լեզուին մեզի ծանօթ նախնաւորն ձեւերով, բան մը չեն հաղորդեր ժողովրդեան նախապատմական կեանքին մասին. այլ պարզապէս արտայայտութիւն մըն են այն օտար ազդեցութիւններուն, որոնք պատմութենէն արդէն բոլորովին յայտնի են: Սահմանափակ՝ հայէս քրիստոնէութեան ձեռք մուծուած քաղաքակրթական ազդեցութենէ մը կը ծագին ասորական եւ յունական փոխառութիւնները, որոնք յարաբերաբար շատ նուազ թուով ժողովրդականացած են. Հիւրըմանի համեմատ (Arm. Gramm., S. 324) հնագոյն հայ մատենագրութեան մէջ եկած յոյն 500 բառերէն հազիւ 50ը ժողովրդական են. մինչդեռ ասորական 100է աւելի փոխառեալ բառերու մեծագոյն մասը կրնանք ժողովրդական համարել: Շատ աւելի՝ վնասակար եւ մեծագոյն ազդեցութեան մը, որուն կը նպաստէր քաղաքական իշխանութիւնը, եւ զոր միայն քրիստոնէութիւնը կրցաւ առաջին անգամ խորտակել, կը պարտին Հայերը բազմութիւն մը Երանեան բառերու, որոնք Հիւրըմանի ցանկին համեմատ 700էն աւելի թիւ մը կը կազմեն. սակայն վերջնական չէ այս թիւը, եւ չէր կրնար միանգամայն վերջնական ըլլալ՝ Երանեան լեզուին հատուկութեան պատճառաւ: Նորագոյն ժամանակի դիւտերով ստացուած անդրագոյն ծանօթութիւնը միջին պարսկերէնի մասին, արդէն իսկ լոյս սփռած է հայերէն այն բառերուն վրայ, որոնք մինչեւ ցարդ իբր Երանեան փոխառութիւններ չէին համարուիր. եւ ինչ ինչ դէպքերու մէջ հայերէն բառերն այնպիսի ակնյայտի Երանեան գրոյմ մը կը կրեն, որ թէեւ անոնց աղբյուրները դեռ մատնանշուած չըլլան, պէտք ենք Երանեան համարել: Երանեան փոխառութիւններն այնպէս խոստումնաւոր են հայերէն բնիկ բառերուն հետ, որ հայ լեզուաբանը քայլ առ քայլ սեւեռելու է իր ակնարկը պարսկերէնի վրայ: Սակայն այս բառերն ալ ոչ թէ ժողովրդեան նախապատմութեան մասին մեզի բան մը կ'աւանդեն, այլ միայն՝ Կիւրաքարէն սկսեալ Հայ-Երանեան այն յարաբերութեանց մասին, որոնք արդէն մեզի ծանօթ են պատմութենէն:

Մի քանի փոխառութիւններ կը տանին